ՊԱՅՄԱՆԳԻՐ №47

Ք. Էջմիածին «07» հուլիս 2020թ.

ՀՀ ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի պետ Ն. Ներսիսյանի, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և «Գանձազարդ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կապալառու, ի դեմս տնօրեն Վլադիկ Հովսեփյանի, մյուս կողմից, գործելով Ընկերությունների կանոնադրությունների հիման վրա,այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով կատարել ք. Էջմիածին Նար-Դոս փողոց 11 հասցեի գազատարի կառուցման և շինհավաքակցման աշխատանքները, այսուհետ՝ Աշխատանքներ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վարձատրել Աշխատանքների համար:

1.2Աշխատանքները համարվում են կատարված Պատվիրատուի կողմից Աշխատանքների ավարտական արդյունքի հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

1.3 Աշխատանքների կատարման ժամկետ սահմանել 90 օրացույցային օր:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2 Աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուից պահանջել 10(տաս)-օրյա ժամկետում անհատույց վերացնել դրանք և հատուցել Պատվիրատուին դրանով հասցված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է

2.2.1 Աշխատանքները ընդունելիս հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կապալառուին,

2.3 Կապալառուն պարտավորվում է

2.3.1 Աշխատանքները կատարել առաջադրանքին, նախագծին, նորմատիվ իրավական ակտերի պահանջներին և սույն պայմանագրին համապատասխան, պատշաճ որակով, անձամբ,

2.4 Կապալառուն իրավունք ունի

2.4.1 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի պահանջը չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքների կատարումից,

2.4.2 Պատվիրատուի համաձայնությամբ Աշխատանքները ավարտել սույն պայմանագրով սահմանված ժամկետից շուտ:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ

3.1 Սույն պայմանագրով կատարման ենթակա Աշխատանքների գինը սահմանվում է 122.573 (մեկ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2 Սույն պայմանագրի 5.1 կետի պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը վեճերը լուծելու դատական կարգով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

6.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.3 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	*Կատարող*
ՀՀ ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժնի	*«Գանձագազ»ՍՊԸ*
Էջմիածնի բաժանմունք	*Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք*
ք. Էջմիածին Նար-Դոս 11	*«Արդշինբանկ» ՓԲԸ*
Հ/Հ 900011288025	*Հ/Հ 2475906422670000*
ՀՎՀՀ 01223338	*ՀՎՀՀ 04723346*
	Տնօրեն
Բաժանմունքի պետ _____ *Ն. Հերսիսյան*	_____ *Վ. Հովսեփյան*